**«Անցում ցածրածխային ոռոգման տեխնոլոգիաներին՝ Հայաստանի Լոռու և Շիրակի մարզերում բարձրացված արդյունավետության, պարենային անվտանգության և բարելավված կենսապահովման համար» ծրագրի մեկնարկի արարողությունը**

2023 թվականի մայիսի 10-ին Երևանի «Իբիս» հյուրանոցում տեղի ունեցավ «Անցում ցածրածխային ոռոգման տեխնոլոգիաներին՝ Հայաստանի Լոռու և Շիրակի մարզերում բարձրացված արդյունավետության, պարենային անվտանգության և բարելավված կենսապահովման համար» ծրագրի մեկնարկի արարողությունը:

Ծրագիրը ֆինանսավորվում է Ճապոնիայի կառավարության կողմից և իրականացվում է ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակի կողմից՝ համագործակցելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, ՀՀ շրջակա միջավայրի և ՀՀ էկոնոմիկայի նախարարությունների հետ:

Արարողությանը ներկա էին Հայաստանում Ճապոնիայի դեսպան պարոն Մասանորի Ֆուկուշիման, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար պարոն Գնել Սանոսյանը, ՀՀ շրջակա միջավայրի նախարար պարոն Հակոբ Սիմիդյանը, Հայաստանում ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ տիկին Նաթիա Նացվլիշվիլին և երեք համագործակցող նախարարությունների և թեմայի հետ առնչվող այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Արարողության ընթացքում Հայաստանի կառավարության երկու նախարարները և ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչը հանդես եկան ելույթներով՝ ողջունելով հյուրերին, ներկայացնելով ծրագիրը և շնորհակալություն հայտնելով Ճապոնիայի կառավարությանը և Ճապոնիայի դեսպանությանը աջակցության համար:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար պարոն Սանոսյանը նշեց, որ ծրագիրը երեք կարևոր բաղադրիչ ունի՝ ջրի արդյունավետ օգտագործումը, էներգիայի խնայողությունը և գյուղատնտեսական նշանակությունը, և բոլորին հաջողություն մաղթեց՝ աշխատանքները պատշաճ ժամկետներում և նախանշված ուղղություններով իրականացնելու համար:

Շրջակա միջավայրի նախարար պարոն Սիմիդյանն ընդգծեց Ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող կարճաժամկետ, արագ և արդյունավետ ծրագրերը: Նախարարն անդրադարձավ նաև նոր ծրագրով առաջարկվող կարևոր լուծումներին և դրա բնապահպանական արդյունքին, մասնավորապես՝ ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարմանը:

ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ տիկին Նացվլիշվիլին շնորհակալություն հայտնեց Հայաստանի և Ճապոնիայի կառավարություններին արդյունավետ համագործակցության համար՝ նշելով, որ Ճապոնիայի կառավարությունն այն յուրահատուկ դոնորներից է, որոնք մեծ ուշադրություն են դարձնում և աջակցում Ազգային ներդրումային ծրագրի իրականացմանը, ինչպես նաև տարբեր ոլորտների մասնագիտական և տեխնիկական կարողությունների զարգացմանը:

Ճապոնիայի դեսպան պարոն Ֆուկուշիման վստահություն հայտնեց, որ ծրագիրը կնպաստի Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի ազգային մակարդակով սահմանված գործողությունների իրագործմանը՝ կրճատելով ոռոգվող գյուղատնտեսության մեջ էներգիայի օգտագործումից առաջացող ածխածնի արտանետումները, ինչպես նաև բարձրացնելով գյուղատնտեսական արտադրությունը և ինքնաբավությունը Լոռու և Շիրակի մարզերում:

Դեսպան Ֆուկուշիման, նախարար Սանոսյանը, նախարար Սիմիդյանը և ՄԱԶԾ ներկայացուցիչ Նացվլիշվիլին (ձախից աջ)

Ծրագրի փաստաթղթի ստորագրումը ՄԱԶԾ ներկայացուցիչ Նացվլիշվիլիի և նախարար Սանոսյանի կողմից

Մասնակիցների ելույթները

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների փոխնախարար Տերտերյանը և Լոռու մարզպետ Խաչատրյանը (ձախից աջ)

Արարողության մասնակիցները

Ծրագրի բանները

【Նկարները ՄԱԶԾ-ի կողմից】